



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևավայրով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

№ 61

«ԳՅՈՒՂԱՅԻ ԴՐԵԴՐԵՆ»

№ 61

Ա. ԱԹԱՆԱՏՅԱՆ

ԲԵՐՔԻ ՅԵՎ ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ
ՏՈՆԸ

ՈՒ ՄԵՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԱՅԴ ՏՈՆԻՆ

338. 98

28-26

ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929 թ.

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ «ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

ՀԵՑԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

1.	Ուղեցույց անտառային աշխատավորի	50
2.	Ս. Շաղոսից—Մէր անելիքները (սպառված)	20
3.	Հ. Փիրումյան և Մելքոնյան—ինչո՞ւ ձեռնառու յէ գործարանում յուղ և շլեց. պանիր պատրաստելը (սպառված)	3
4.	Փիրումյան—Խոտարույսերը և նրանց մշակության յեղանակները (սպառված)	10
5.	Խ. Ավդարեցյան—ՀՍԽՀ Հողային Որենսդիրքը, բացատրական հարց ու պատասխաններով. մասն առաջին, աշխատ. հողողտապահություն (սպառ.)	30
6.	Պ. Հեմիմյան—Թթենու մշակությունը (սպառված)	10
7.	Պ. Հեմիմյան—Շերամի վորդը, նրա կերակրելն ու իշխամբը	10
8.	Խ. Յերիցյան—Կաթնառնտեսության գործնական ձևուարկ, մասն առաջին (64 նկ.) սպառված)	50
9.	Կ. Մելիք-Շահնազարյան—Ծխախոտի մշակությունը (սպառված)	20
10.	Խ. Յերիցյան—Ահճատակա՞ն, թե՞ կոոպ. կաթնառնտեսություն	20
11.	Հ. Հարուրյան—Բատրակ, կնքիր պայմանագիր (չափածո) (սպառված)	10
12.	Հ. Հարուրյան—Բատրակ, կնքիր պայմանագիր	5
13.	Մ. Թումանյան—Շարքացանը և նրա նշակակութ.	15
14.	Խ. Տեր-Ներսիսյան—Մինչպես մշակել խաղողի այդիները (28 նկարով) (սպառված)	35
15.	Տերեսներս դեպի գյուղ—Անդրկովկասյան Յերկրային Կոմիտեի բանաձեռնություղացիական հարցի մասին.	15
16.	Հայաստանի Կոմիտեինստանդան կուսակցության Կենտրոնական Կոմիտեի Զորբորդ Պետութի թանաւնվերը (սպառված)	15
17.	Ռ. Արմելյան—Խոչոր յեղջուրավոր անասունների ժանուարիտը (սպառված)	15

Ա. ԱՐԱՆԱՑՑԱՆ

338.98:63

Ա-26

ԱՐ

ԲԵՐՔԻ ՅԵՎ ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ

ՏՈՆԸ

ՈՒ ՄԵՐ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԱՅԴ ՏՈՆԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ Ազգային
ԳԱՅԱՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԳՈՒԹՅՈՒՆ

1929

15169-57

ԲԵՐՔԻ ՑԵՎ ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՏՈՆԸ

1. ԻՆՉՊԵՍ ԵՐ ԿԱՏԱՐՎՈՒՄ ԲԵՐՔԻ ՏՈՆՆ ԱՌԱՋՆԵՐՈՒՄ

Յոթներորդ տարին ե, վոր Խորհրդային Հայաստանի գյուղացիությունը կատարում ե «Բերքի տոնը»: Մինչև խորհրդայնացումը մենք այդպիսի տոն չունեյինք: Բայց դրա փոխարեն կային «սուրբ» աստվածածնի, «սուրբ» խաչի, սուրբ գեորգների և ուրիշ բազմաթիվ սուրբերի և յեկեղեցական տոներ ու ուխտեր, յերբ աշնանը, բերքը ժողովելուց հետո, գյուղացիք ճժովվածով, մեծ ու փոքրով, անդամ հիվանդներով, վերցնելով ամենալավ զառն ու թոխին, խունկն ու մոմը, վորն իշով, վորը ձիյով, իսկ մեծ մասը վոտաբորիկ տասնյակ վերստերով ճանապարհ եյին կտրում, վոր գնան այս կամ այն սրբի անունով շինած յեկեղեցին, վանքն ու մատուռը՝ մատաղ անելու, աղոթելու, մոմ վառելու և իրար վիրավորելու, յերբեմն նույնիսկ սպանելու համար: Դա կոչվում եր մեզանում ուխտագնացություն:

Թե ժողովրդական ի՞նչքան հարստություն ու դրամ եր վատնվում այդտեսակ տոներին, թե ի՞նչ չափերի յեր հասնում այդ ուխտերին

ՅԵՐԵՎԱՆ, ՀԱՅՈՒՆԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ
Պատվ. 116 Գրառեպվ. 2759 բ ա. 3000

գինեկոնծությունն ու հարբեցողությունը և
ինչ հետեւանքներ ելին ստացվում դրանից—
այդ մասին թող խոսի հռչակավոր ուխտատե-
ղիներից մեկի՝ Դարձագյազի «սուրբ խաչի»
ուխտագնացություն նկարագրողը: «Սուրբ
խաչի» տոնին, գրում ենա, յեկել ժողովվել
ելին, սկսած մոտավոր գյուղերից մինչև ա-
մենահեռավոր գյուղերը 15 հազարից ավելի
գյուղացիներ: Մար, ձոր, անտառ ու բակը
լիքն եր կանանց, յերեխաների ու մեծերի աղ-
մուկով ու իրարանցումով: Յերկու պրիս-
տավներ 30-40 սորաժնիկներով, վորոնք
հատկապես ուղարկված ելին կարդ պահպա-
նելու համար, չելին կարողանում այստեղ և
այնտեղ առաջացած կոփներին, գլուխ ջար-
դոցներին և խանչալ ու ռեվորվեր հանողներին
հասնել—«Ալրատակոլ» կազմել: Յերկու վար-
դապետ, մի յեպիսկոպոս, հատկապես Եջմի-
ածնից յեկած, և 30 չափ քահանաներ հազիվ
հազ հասնում ելին մատաղներն որհնելու,
խաչամբույրներ և մատաղի մորթիներ ժո-
ղովելու ծանր գործում: Այս տոնին Եջմածի-
նը վերցրեց 3500 ոռոգի խաչամբույր, 900
ոռուք մոմ վաճառվեց ու 865 մատաղի մորթի
ժողովեց: Տոնակատարության յերեք որերում
26 գլուխ, ձեռ ու վոտ ջարդվեց, 2 հողի ըս-
տանվեցին, 12 աղջիկ ու հարս փախցրին և,
ինչպես ասացին ինձ, այս յերեք որում խըմ-
վեց 1800 վերը գինի և մոտ 200 վերը արադ
ու կոնյակ: Այնպես վոր, յեթե ջարդված գը-
լուխներն ու սպանված մարդկանց չհաշվենք,

Դարալագյազի «սուրբ խաչի» ուխտը գյուղա-
ցիության վրա նստեց առնվազը 30-40 հա-
զար ոռուքի»—ավարտում ե իր թղթակցու-
թյունն այդ տոնի նկարագրող բժիշկ Քաջրե-
րունին*):

Այսքանը միայն մի ուխտում, մի սրբի
համար, իսկ թե ինչքա՞ն այդպիսի սրբեր ու
ուխտագնացություններ կային Հայաստանի
զանազան վայրերում և ժողովուրդն ինչքա՞ն
դրամ, մատաղ, գլուխ ու մարդ եր զոհում
այդ սրբերի տոներին ու ուխտերին—դրա
չափն ու հաշիվը չկա:

Ահա՛, թե ինչպես եր կատարում մեր աշ-
խատավոր գյուղացիությունն իր «Բէերքի տո-
նը» առաջներում: Ցավելով պետք ե ասել,
վոր նույնը մասամբ կատարվում ենաև Հա-
յաստանի խորհրդայնացման իններորդ տա-
րում, չնորհիվ մի կողմից մեր գյուղացիու-
թյան տգիտության և մյուս կողմից հոգևո-
րականության:

Ճիշտ ե, խորհրդայնացման շրջանում նը-
վազել ե հավատացյալների թիվը և այլևս
գյուղացիական մասսան առաջվա նման այն-
պես հախուսն թափով չի այցելում վանքերն
ու ուխտատեղիները, բայց վոր այդ ուխտերը
դարձյալ շարունակվում են և աշխատավոր
ժողովրդի անդիտակ մասը դարձյալ տարե-

*) Տես «Արձագանք» 1895 թ. № 36 «Մի ուխտագնացու-
թյուն», Քաջրերունի

կան հազարներ ե ծախսում մատաղի, խռովնի, մոմի ու «դանձանակ»-ի վրա նույն տերտերների «որհնությամբ», դա ևս փաստ ե, վարի գեմ կոիվը պետք ե ավելի ծավալել կուլտուրական և ազիտացիոն բոլոր միջոցներով։

2. ԽՆՉՈՒՄ ՍԱՀՄԱՆԼԵՅ «ԲԵՐՔԻ ՏՈՆԸ»

Կովի այսպիսի միջոցներից մեկն ե Խորհրդային իշխանության կողմից սահմանված «Բերքի տոնը»։

Ինչո՞ւ սահմանվեց «Բերքի տոնը», ի՞նչ նպատակ ունի նա։ Այս հարցերն ե տալիս այսոր իրեն, ամեն մի գյուղացի, ամեն մի բանվոր։

Բանվորներն ու գյուղացիները, հենց վոր իշխանությունն իրենց ձեռքն առան, չեյին կարող ամենից առաջ չմտածել ազատելու աշխատավորությանը տղիտության և մանավանդ հոգեռորականության ճանկերից. այս վերջինը ձեռք ձեռքի տված հին իշխանության ու կապիտալիստական տարրերի հետ որ ու գիշեր աշխատում եյին ի վնաս հենց նույն այդ գյուղացիների ու բանվորների։

Ահա այդ նպատակով Խորհրդային իշխանությունը վորոշում ե ժողովրդի համար սահմանել ուրիշ, ավելի խելացի, ոգտավետ ու առողջ տոներ՝ պայքարելու այլ ուխտերի ու տոների դեմ, վորի մի պատկերը տվեցինք վերեւում։ Յեվ վորպես այդպիսիք սահմանվում են հեղափոխական տոները, ինչպես

Մայիսի մեկի, «Փարիզի Կոմմունայի որը», «26 Կոմունարների», «Հոկտեմբերյան հեղափոխության» տոները։ Բայց այդ տոներից սահմանվում են բնության և աշխատանքի հետ կապված այնպիսի տոներ, ինչպես որինակ՝ «Ծառատունիկի» և «Բերքի տոններն» են, վորոնց ժամանակ գյուղացի աշխատավոր մասսաները վոչ թե մատաղներ են մորթում, խունկ ու մոմ ծխում, սրբերին աջահամբույրներ տալիս, իրար ծեծում ու գյուղներ ջարդում, այլ իրենց ամայի գյուղերի փողոցները սիրուն տնկիներ տնկելով գեղեցկացնում ու զարդարում են, իսկ մյուս կողմից՝ ծառատունկերով ամրացնում են առուների ու ջըրանցքների յեղբները, ստվեր ու հանգիստ են ստեղծում թե իրենց համար, թե իրենց անասունների համար, ավելացնում են պարտեզների, պտղատու այդիների տարածությունը և յեկամտի նորանոր աղբյուրներ ստեղծում։

Դա, ինչպես գիտենք, «Ծառատնկման տոնն» ե, վորը վեց տարիներից ի վեր կատարում ե Խորհրդային Հայաստանն ամեն տեղ՝ գյուղերում ու քաղաքներում։

Նման կուլտուրական և ավելի խոշոր ու ոգտավետ տոն ե ամեն տարի հոկտեմբերին ու նոյեմբերին կատարվող «Բերքի տոնը», յերբ ամբողջ գյուղը, մասնավորապես նրա աշխատավոր մասը, մեծ հանդեսներով և ցուցահանդեսներ կազմելով հրապարակ ե բերում իր քրտնաշան աշխատանքի լավագույն ար-

գյուղները՝ իր լավ բերքը, իր լավ անասունը, լավ թռչուններն ու պտուղները և այլն, ցույց տալու, թե ի՞նչ կարելի յէ անել մի տարվա ընթացքում տնտեսությունը բարձրացնելու, նրա այս կամ այն ճյուղը զարդացնելու ամրացնելու գործում։

«Բերքի տոնին» կազմակերպված ցուցահանդեսները, մրցությունները, զրույցներն ու դասախոսությունները, ցուցադրական դատերն ու չերթները, կինոն ու ներկայացումները, դրանք աշխատավոր գյուղացիության կուլտուրական առաջադիմության ու բարեկեցության ամենից լավ նշաններն են։ Վո՞չ թե գինի ու արագ՝ Հարբելու համար, վո՞չ թե ծեծ ու գլուխների ջարդոց, վոչ թե մոմ ու խունկ, այլ առողջ, խելացի ու չահավետ տոնակատարություն իր նման աշխատավոր ընկերների, կոռպերատորների, գյուղատնտեսների, տրակտորիստների հետ։ Անիմաստ ու անտեղի «Քեֆերի» փոխարեն մրցանակ՝ իր կատարած լավ աշխատանքի համար։ Հարբեցողության փոխարեն՝ խելացի և ուսանելի դասախոսություն, մատաղի փոխարեն՝ կինո, յերաժշտություն, թատրոն, ծեծի ու սպանության փոխարեն՝ զրույց, ռադիո, ցուցադրական ու ուսանելի դատ։ Ահա թե բանվորների և գյուղացիների իշխանությունն ինչով փոխարինեց Հոգևորականության կողմից սահմանված տոները։ Եեվ մենք տեսնում ենք, վոր նոր տոները տարեցտարի ավելի և ավելի ըն-

դարձակվում, ուսանելի և ոգտավետ են դառնում աշխատավոր գյուղացիության համար։ Նրանք հետզհետե աշխատավոր գյուղացիությանը մոռացնել պետք է տան բոլոր ուիտերն ու «սրբերն», նրանցից անբաժան տերտերներով ու վարդապետներով։

3. ԽՆՉՈՒՅ ՅԵ ԱՅՍ ՏՈՆԸ ԿՈՉՎՈՒՄ ՆԱՅՎ «ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՏՈՆ»

Այս տարի «Բերքի տոնը» մի ուրիշ նորություն ունի իր մեջ, այդ այն ե, վոր նա կոչվում և վոչ միայն «Բերքի տոն» ինչպես առաջներում եր, այլև՝ «Բերքի և կոլեկտիվացման տոն»։

Ի՞նչու յե նա կոչվում «կոլեկտիվացման տոն», ի՞նչ բան ե կոլեկտիվացումը և ի՞նչու յենք նրա տոնակատարությունը միացրել «Բերքի տոնի» հետ։

Խորհրդային Հայաստանի մոտ 1300 գյուղերում կան 160 հազար գյուղական տնտեսություններ։ Գյուղական ամեն մի տնտեսության վրա, նայած չնչերի թվին, ընկնում է $1\frac{1}{2}$ -ից մինչև 8 հեկտար զանազան տեսակի և իրարից տարբեր հեռավորության վրա գտնվող հողաբաժններ։ Այդ հողաբաժնները մի կամ յերկու տեղում չեն, այլ նրանք ցրված են գյուղական համայնքին պատկանող 5, 6, 7 և ավելի տեղերում։ Կան գյուղեր, ուր, չնորհիվ տեղային աննպաստ պայմանների, ամեն մի տնտեսության պատկանող վարելահողերը

բաղկացած են 12—18 մանր հողաբաժիններից և ընկած են տարբեր տեղերում, դրա պատճառով արտը այնքան փոքր է, վորը հազիվ կազմում է 250—300 քառ. մետր: Ճիշտ է, խորհրդային նոր հողաշինաբարությունն աշխատում է հողերը մի տեղ կենտրոնացնելով պակասեցնել հողաբաժինների այդ մեծ թիվը, հասցնելով այն 2—4 կտորների, բայց հենց այդ դեպքումն ել ամեն մի տնտեսության պատկանող վարելահողերը դարձյալ մնում են այնքան փոքր, վոր անհատ տնտեսությունը հնարավորություն չունի իր տնտեսության մեջ դործագրել վորոշ ցանքաշրջանառություն և սերմնափխոխություն, կիրառել արակտոր, սերմազտիչ, շարքաշան, հընձող, կալսող և այլ բարդ մեքենաներ: Ինչպես փորձերը ցույց են տվել, յերբ 5—10 և ավելի միացված տնտեսությունների կողմից են արվում, դրանով նաև մի կողմից եժանանում, մյուս կողմից արագացնում ու հեշտացնում են գյուղատնտեսական աշխատանքները: Կա և մի ուրիշ առավելություն, յերբ գյուղացին միացյալ ուժերով ե աշխատում նրա թե՛րերքն ե բարձրանում և թե՛ր աշխատանքները ուղիղ նալացման յենթարկվում: Բացի դրանից, նը կատված ե, մի ուրիշ բան ել: Հայտնի յե, վոր ամեն մի անհատ տնտեսություն ցանում ե տարբեր տեսակի սերմ, մեկը՝ տեղական կլիմային հարմար, մաքրած ու լավորակ, մյուս՝ «յոլա յե գնում» իր ունեցած կամ ձեռք բերած անմաքուր, վատ և տեղի պայմաննե-

րին չհամապատասխանող սերմերով: Դրա հետեւանքով նույն գյուղում մեկն ստանում ե ըստ բերք, մյուսը՝ վատ, բերքն ել իր հատկությամբ լինում ե անհավասար, իսկ ընդհանուր առմամբ—ցածր:

Դա դեռ բավական չե. շատ տնտեսություններ իրանց հողը վարում են գութաններով, մյուսները չութով ու արորով, մեկը պարարտացնում ե իր հողը, մյուսը՝ վոչ, մեկը ժամանակին ե ցանում, մյուսն՝ ուշ: Նույնը կատարվում ե հնձելիս, կալսելիս և այլն և այլն:

Նկատվում են և ուրիշ վատ յերեսությներ: Անհատ տնտեսություններն հողերը վարելիս, արտերի մանրության պատճառով, իրենց և հարևան տնտեսությունների հողերի միջև թողնում են արտամեջեր (սինորներ). դրանց հետեւանքով արտերի սահմաններում մնում են մեծ քանակով ազատ, չմշակված հողեր, վորոնց վրա բանում են մոլախոտեր. սրանք սերմնակալում են ու քամին տանելով դրանց սերմները, ցրում ե արտերի մեջ, և ահա հաջորդ տարին արտերի մեջ բանում են զանազան մոլախոտեր, վորոնք իրենց հերթին վնասում են ցանքին, փչացնում և իջեցնում են նրա բերքատվությունը:

Ո՞վ ե ամենից շատ վնասվում այս յեղանակով տարվող յերկրագործությունից, իհարկե, առաջին հերթին գյուղի չքավորը, բատրակը, քիչ չունչ ունեցող տնտեսությու-

նը, վորի հողերից ստացված բերքը միշտ եւ ավելի քիչ եւ լինում և հատկությամբ ավելի վատ, քան գյուղի կուլակի, ուժեղ, բազմանդամ, գյուղատնտեսական շատ ինվենտարդութան, քամհար, լավ անասուն և շատ աշխատավոր ձեռքեր ունեցողի տնտեսությունը:

Այսպես եւ յեղել մեր գյուղատնտեսությունն առաջներում. նույն եւ հիմա: Դրանից, ամենից շատ, իհարկե, վնասվել են գյուղ չքավորը, բատրակները և յերթեմն նաև միջակ ու թույլ տնտեսությունները, վորոնք, ինչպես գիտենք, կազմում են գյուղի բոլոր տնտեսությունների $85\text{--}90\%$ ը:

Եեկ ահա գրա առաջն առնելու, գյուղի չքավորին ու բատրակին և թույլ ու միջակ տնտեսություններին իրենց հողերն ամբողջովին մշակելու և նրանցից բարձր բերք ստանալու նպատակով Խորհրդային իշխանությունը՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ վորոշել ե գտնել և գործադրել գյուղատնտեսության այնպիսի յեղանակներ, վորոնց գործադրելով մի քանի տարիների մեջ աղքատ ու յետամնաց գյուղը, նրա ամենից չքավոր տարրը կարդի յե գցում իր տնտեսությունը, նրան վերակառուցում ե նոր ձեվերով և, բարձրացնելով իր հողերի բերքավությունը, դառնում ե ուժեղ ու բարեկեցիկ:

Վո՞րն ե բերքատվությունը բարձրացնող, գյուղատնտեսությունը սոցիալիստա-

կան հանապարհի վրա դնող տնտեսավարության ձեր:

Դա գյուղատնտեսության կոլեկտիվացումն ե, նրա ընկերական, միացյալ յեղանակներով տանելլ:

4. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

— Ինչո՞ւ յեն, թե Խորհրդային իշխանությունը և թե կոմմունիստական կուսակցությունը գյուղատնտեսության մեջ, նրա աշխատանքի հիմքում գրել կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումը:

— Վորովհետեւ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումն անկարելի յե առանց խորհրդային տնտեսությունների և կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպության ու զարգացման:

Մեր գյուղատնտեսության զարգացումը յետ ե մնացել արդյունաբերության զարգացումից, այնինչ մեր օ-ամյա պլանով արդյունաբերությունը կմեծանա նախապատերազմյանի չափով 100% -ով, գյուղատնտեսությունը զարգանում է միայն 30% -ով: Յեթե նա նույն թափով զարգանա, ինչ վոր մինչեաժմ, ի հարկե զարգացման այս չափը բավական չե, նա կատարելաւպես չի ապահովի հում նյութերով մեր արդյունաբերությունը. մեր բազմացող գործարանների բանվորներին պետք ե ապահովել հացով և գյուղանտեսական մթերքներով, մեր դորձարաննե-

ըին պետք ե առատորեն հում նյութ մատակարաբել, բուրդ, բամբակ, կաշի և այլն: Բացի դրանից պետք ե մեծ քանակությամբ գյուղատնտեսական մթերք արտահանել ոտար յերկիրներ դրանց փոխարեն մեր յերկիրը մեքենաներ ներմուծելու համար: Այս բոլորը պահանջում են վոր մենք մեր գյուղատնտեսությունը չատ ավելի մեծ թափով զարգացնենք և բարձրացնենք նրա արտադրողականությունը, իսկ սա հնարավոր չե առանց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման. դա նշանակում ե—գյուղի մանր, անհատ տնտեսությունները միացնելով վերածել նրանց խոշոր հանրայնացած տնտեսությունների, այսինքն՝ կոլեկտիվ տնտեսությունների: Գյուղատնտեսության փոխվող այս ձեւը մեկ կողմից կապահովի մեզ գյուղատնտեսական մեքենաների չատացումով, վորը կրավարարի մեր արդյունաբերությանը և արտահանման կարիքը, մյուս կողմից գյուղի չքավոր և միջակ տարրերի կյանքը կրարելավի, ազատելով նրանց գյուղի կուլակի շահակդումից:

Կոլեկտիվ տնտեսությունը տնտեսապես և քաղաքականապես կամրացնի գյուղի չքավորությանը, բատրակների դիրքը, վորոնք դաշինք կապած գյուղի միջակների հետ, կը հաղթահարեն կուլակների և Խորհրդային իշխանության բոլոր հակառակորդների այն հարձակումները, վոր նրանք մղում են խորհրդային իշխանության դեմ հայտնի և գաղտ-

նի կերպով, կանգ չառնելով վոչ մի միջոցի առաջ. կոլեկտիվ տնտեսությունը չքավոր գյուղացու՝ կուլակների դեմ տարած դասակարգային կովի ամենաուժեղ զենքն ե, վորով նրանք թե՛ տնտեսապես, թե՛ իդեոլոգիապես և թե կուլտուրական տեսակետից ավելի կազմակերպվում, ուժեղանում, իրենց ուժերը համախմբում և Խորհրդային իշխանության ու Կոմմունիստական կուսակցության և բանվորական մասսաների ոժանդակությամբ վերջնական պարտության կմատնեն կուլակին, սպեկուլյանտին, նեպմանին, առաջ տանելով սոցիալիզմ կառուցելու գործը գյուղում, ճիշտ այնպես, ինչպես այդ անում ե բանվոր դասակարգը քաղաքում:

Սրա համար ե, վոր գյուղի կուլակն ակտիվացել ե, ամեն միջոցով ուզում ե արդելք լինել գյուղի չքավորության և միջակների կոլեկտիվացմանը, պրովակացիա և բամբանքներ և տարածում, համոզում, խարում, քաղցր լեզու բանեցնում, աղվեսային հնարամությունների դիմում, յերբեմն սպառնալիքներ կարդում և հաճախ ել քրեյական հանգաներ կատարում: Կուլակը պարզ տեսնում ե, վոր կոլեկտիվ տնտեսությունների զարգացումը կուլակների համար գերեզման և պատրաստում, և այդ պատճառով ել նա ավելի գաղագում ե ու ատամները սրում բռուն ատելությամբ դեպի գյուղի չքավորն ու միջակը, վորոնք, դաշն կապած և միացած բան-

Վոր դասակարգի հետ, զնում են սոցիալիզմի կառուցման ուղիով քաղաքում և գյուղում:

Վորքան մեծ թվով և արագ կազմակերպվեն, վորքան խոշոր ու ամուր լինեն գյուղատնտեսությունը տանելու մեր այս ձևերը, այնքան չատ ու այնքան ուժեղ կլինեն աշխատավոր գյուղացու հարվածները գյուղի կուլտին ու վաշխառույի դլիմին և այնքան ել չուտ ու հեշտ կլինի մեր յերթը սոցիալիզմի ճանապարհով: Բայց սրանից, մեծ ենակ կուլտիվ տնտեսությունից ստացվող ոգուտն աշխատավորության համար:

Ծանոթանանք դրանց ողտափետության հետ:

5. ՀՈՂԵՐԻ ՄԻԱՅՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՄԻԱՍԻՆ ՄԾԱԿԵԼԸ

Սրա եյութոյնն այն է, վոր այստեղ-այնտեղ ցրված անհատ տնտեսությունների վարելահողերը, արտերը, խոտհարքները և այն կենտրոնացվում են մի տեղ: Այսպիսով, նայած թե քանի տնտեսություններ են միանում, ստացվում են մի կամ չատ-չատ յերկու տեղում կենտրոնացած մեծ հողամաս, վորի վրա կարելի յե վորոշ ցանքաշրջանառություն կիրառել, արդյունավետ յեղանակով գործադրել տրակտոր, շարքացան, հնձող, կալսող և այլ բարդ մեքենաներ, կարելի յե մի տեսակի լավ սերմացու ցանել և ստանալ միատեսակ հունձ, պարարտացնել հողերը մի յեղանակով, դրե-

թե միաժամանակ մաքրել, ախտահանել սերմացուն, ցանել ու խնամել ցանածը, հնձել, կալսել ու փոխադրել բերքը և նրա ավելցուկը պետական մի հաստատության, կոոպերատիվ կազմակերպության վաճառել ձեռնուու գներով, ստանալով դրա համար նախապես դրամ (կոնտրակտացիա կապել):

Յերբ գյուղի չքավոր ու միջակ տնտեսությունները միանում են հողը միասնաբար մըշակելու համար, մեջ բերելով իրենց հողերը, աշխատանքը, գույքը, գործիքները. և կազմում են մի կազմակերպություն, դա կոչվում է գյուղատնեսության կոլլեկտիվ տնտեսության յեղանակ, իսկ կազմակերպությունը՝ կոլլեկտիվ տնտեսություն:

Գյուղատնտեսության այդ յեղանակին Խորհրդային իշխանությունը դիմեց խորհրդայնացման հենց առաջին որերից, բայց կուլտիվ տնտեսությունները Միության մեջ սկսեցին հիմնալորպել և որորի վրա զարգանալ ու բազմանալ սկսած 1926-28 թվից, յերբ կազմակերպվեցին 20,000-ից ավելի զանազան տիպի կոլլեկտիվներ և միություններ: Այս տիպի կոլլեկտիվներ և միությունները: Այս տիպի դրանց թիվն, ինչպես յերեսում են, 60,000-ից կանցնի:

Նույն բանը տեսնում ենք մենք նաև Խորհրդային Հայաստանում:

Թե կոլլեկտիվ տնտեսություններն ի՞նչպես են զարգացնել անցած տարիներում և ի՞նչ ծրագրով են զարգանալու մինչև 1930 թիվը,



Դրա պատկերը յերևում է Կոլտնտէնտրոնի
տվյած հետեւյալ աղյուսակից:

Տարի	Կոլտնտէս. թիվը	Տնտեսութ. թիվը	Շնչերի թիվը	Հողերի տա- րածութ. հեկ- տարներով
1927	6	346	741	1092
1928	55	1082	3987	6360
1929	178	4350	19355	25544
1930	400	14300	69140	44584

Այս աղյուսակը ցույց է տալիս, վոր արք դեն առաջիկա 1930 թվի վերջում Հայաստանի գյուղական բոլոր տնտեսությունների և վարելահողերի $9-10^0/0$ -ը մտնելու յեն կոլտնտեսությունների մեջ, մինչդեռ սրանից յերեք տարի առաջ նրանք մի տասյերբորդական տոկոսն անդամ չելին կազմում:

Ի՞նչ է ապացուցում այս փաստը—այն, վոր Հայաստանի գյուղացիության չքավոր և միջակ տարրերն որ-որի հասկանում են կոլտնտեսությունների ունեցած առավելություններն անհատ տնտեսությունների նկատմամբ, և այսոր չտեսնված թափով կազմակերպելով այդպիսի տնտեսություններ, նրանք մտնում են դրանց մեջ, վայելում այն բոլոր արտոնություններն ու առավելությունները, վոր տալիս է նրանց կոլտնտեսությունը:

Սրանից պարզ է, վոր խորիրադյին գյուղատնտեսությունը գնում է և այսուհետև ել գնալու յեղանակով կոլլեկտիվացման նաևապարհով։ Պարզ է, վոր միայն այդ յեղանակով է, վոր մեր գյուղացիության չքավոր ու միջակ տընտեսությունները կարող են բարձրացնել ինսերի վորակն ու քանակը և դրա հետեւանքով ձեռք կրերեն տնտեսական ու կուլտուրական խոշոր նվաճումներ։

Ինչո՞վ ենք վստահ, վոր կոլլեկտիվ տնտեսություններն ավելի լավ կտանեն իրենց տնտեսական աշխատանքները, ավելի մեծ հաջողություն կունենան բերքի բարձրացման գործում, քան անհատական տնտեսությունները։

Դրա համար ունե՞նք փաստեր և անհերքելի տվյալներ։

Անշուշտ՝ ունենք։

Մենք գիտենք, վոր 1929 թվի գարնանը սերմանման կամպանիայի ընթացքում ամեն տեղ կազմակերպվեցին բերքարշավներ և մեր բոլոր գյուղերին առաջարկվում եր բերքը բարձրացնելու համար գործադրել հետեւյալ պարզ միջոցները։

6. ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆՈՂ ՊԱՐԶ ՄԻՋՈՅՆԵՐԸ

Վորո՞նք են բերքը բարձրացնող գյուղատնտեսական ամենապարզ միջոցները։

Դրանց թիվը չափ մեծ չե և վոչ ել դրանց կատարելն է դժվար ու մեծ ծախքեր ու աշ-

խատանք պահանջող։ Թվենք դրանց գլխաւորները։

ա) Հողերի մշակությունը—վարն անել վոչ թե արորմերով, այլ գութանով։

ինչո՞ւ յե գութանով արած վարն ավելի տեծ բերք տալիս, քան արորով արածը։

Դրա պատասխանը պարզ և հասկանալի յե ամեն մի ուշադիր հողագործի համար։

Բանն այն ե, վոր գութանն ավելի խորն է կտրում հողը, քան արորը, գութանն իր կըրծքով չուռ և տալիս հողի չերտը, իսկ արորը՝ վոչ։ Հնորհիվ հենց այդ յերկու առավելությունների անձրեւ, ջուրը, ձյունը, վորոնք այնքան հարկավոր են ամեն մի բույսի լավ աճելու, զարգանալու համար, մտնում, ծըծվում են հողի մեջ խորը և ամբարվելով այդտեղ, ցանած բույսին յերկար ժամանակ ջուր են տալիս։ այն ինչ արորով արած վարի մեջ ջուրը չի կարողանում հողի մեջ խորը մտնել, այնտեղ ամբարվել, դրա պատճառով ել մի քանի շաբաթվա տաք որերը բավական են վորպեսզի արորով վարած հողի միջից յեղած ջուրը զոլորշիանա։ Դրա հետեւանքով ցանած բույսը շուտով նվազում է, չի զարգանում և քիչ ե բերք տալիս։ Հայաստանում կատարված մի շաբաթ փորձերը ցույց են տվել, վոր գութանով արած վարի հեկտարից ստացվել ե 12 ցենտներ (72 փութ) ցորեն, իսկ նրա կողքին արորով վարած արտի մի հեկտարը տրվել ե ընդամենը 7 ցենտներ (42 փութ)։

Բացի դրանից, գութանն ունի և այն առավելությունը, վոր նա իր խոփով կտրում ե մոլախոտերը և դրանց հողի տակն անելով նախ մոլախոտերն են վոչնչանում, ապա նըրանք, հողի մեջ մնալով, փառում են և ցանած բույսերի համար դառնում են սնունդ, վորից բերքը նույնպես ավելանում է։

բ) Հողերի պարարտացումը։—Բերքի բարձրացման խնդրում պարարտացումը մեծ դեր է կատարում։ Նկատված ե, վոր ամեն մի նույնիսկ հարուստ հող, յեթե նրա վրա յերկար տարիներ իրար յետևից միևնույն բույսն ենք ցանում, դրանից բերքը տարեց-տարի պակասում է։ Դրան մենք անվանում ենք հողի հոգնածություն։ Բայց բավական ե, վոր մենք այդպիսի հոգնած արտերն աղբենք կամ պարարտացնենք, և ահա դրանով նույն արտի բերքատվությունն սկսում է բարձրանալ։

— Ինչո՞ւ։

— Վորովհետև հողն աղբելով կամ պարարտացնելով, մենք նրա մեջ ավելացնում ենք բույսի համար անհրաժեշտ սնունդը, իսկ շատ և լավ սնունդից բույսն ավելի լավ ե աճում, լավ ե սնվում և դառնում ե ավելի դիմացկուն դրանից ե ահա՛, վոր ավելանում ե բերքը։

Նույն փորձերը ցույց են տվել, վոր լավ պարարտացումը բերքն ավելացրել ե յերեմն 100% -ով, յերեմն 20, 30, 40 տոկոսով՝ նայած պարարտացման ու աղբի տեսակին։ Յեկրտապայի առաջավոր յերկրներում ընդունված

Ե անասուններ պահել, վոչ այնքան նրանցից ուրիշ ողուտներ ստանալու, վորքան աղբ ըստանալու համար, քանի վոր միայն աղբից ստացած ողուտը, յերբ նրանով պարարտացնում են հողը, ծածկում ե ունեցած անասունների կերակրման ծախքերի կեսը:

Ճիշտ ե, մեղանում՝ Խորհրդային Հայաստանում, շնորհիվ անասունների քչության և վառելիքի պակասության, անասուննենրի աղբը գյուղացիների կողմից գրեթե ամբողջապես գործադրվում ե վորպես վառելիք, բայց լավ տնտեսը, վորն ուզում ե իր հողը պարատացնել, նա վառելու համար գործ ե ածում հանդերից ժողոված զանազան խոտեր, փշեր, այդիներից ստացված չորուկներ, իսկ իր անասունների աղբը, տնտեսության մեջ առաջացած մոխիրը և տանը ժողոված աղբը նա գործադրում ե արտը պարարտացնելու համար, դրա հետևանքով այդպիսի տնտեսների ստացած բերքը շատավելի բարձր ե լինում, քան չաղքած արտերից ստացածը:

Բացի գոմաղբից, վորպես պարարտանյութ ծառայում են զանազան աղեր, բամբակի և ուրիշ յուղապտուղների, քուսպի ալյուրը և այլն: Հենց այս տարի Խորհրդային Հայաստանում, նրա բամբակագործական շրջաններում, բամբակի տակ գտնված բոլոր հողերի $25\%-\text{ը}$ պարարտացվել են արհեստական պարարտանյութերով, վորի հետևանքով բամբակի բերքի $10-15$ տոկոսով բարձրացումը ապահովված կարելի յե համարել:

Դ) Կավ սերմացույի նշանակությունն այնքան պարզ ե, վոր դրա մասին չարժե յերկար խոսել: Զե՞ վոր ինքը մեր գյուղացին ե հեղինակն այն ասացվածքի, թե՝ «ինչ կցանես, այն ել կհնձես». — այսինքն, յերբ լավ, առողջ, ընտիր սերմ յես ցանում, դու ստանում ես նույնպիսի բերք և ընդհակառակը՝ վատ, կեղտոտ սերմացու գործադրելիս ստանում ես վատորակ բերք: Դա վերաբերում ե սերմի հատկությանը: Դալով լավ սերմացույից ստացած բերքի քանակին, բոլոր փորձերը ցույց են տվել, վոր լավորակ սերմացուն բերքն ավելացնում ե 20 , 30 , $40\%-\text{ով}$, յեթե միայն այդ սերմը ցանվել ե իր ժամանակին և լավ մշակված հողի մեջ:

Իսկ լավ սերմացու հեշտությամբ կարելի յե ստանալ, յեթե միայն մեր ունեցած սերմը մենք մաքրում ու գտում ենք հատուկ մեքենաներով, վորոնք կոչվում են տրիյերեներ և սերմագույներ: Այդ մեքենաների միջոցով սերմի մեջ գտնված բոլոր վատ, նվազ սերմերը զըտվում են, զտվում են նաև մոլախոտերի սերմերը և ցանելու մնում են առողջ, ծանր, լիքը սերմերը, վորոնք ցանվելուց հետո դիմանում են յերաշտին, քամիներին, վնասատուներին ու հիվանդություններին և տալիս են մեծ բերք:

Ավելի մեծ արդյունք են տալիս տեսակավոր սերմերը, վորոնք մշակվում են հատուկ փորձված և ամենաընտիր սերմերից և բաժանվում են գյուղացիներին ցանելու:

թ. Թուաստանում անցյալ տարի հետազոտվեցին 1000 գյուղական այնպիսի տնտեսություններ, վորոնք մեծ բերք եյին ստացել, և այդ 1000 տնտեսության հաջողության ամեն նամեծ տոկոսն ընկնում եր այն տնտեսությունների վրա, վորոնք տեսակավոր սերմեր եյին ցանել: Միայն այդ տեսակ սերմեր գործադրելով նրանք ցորենի բերքատվությունը բարձրացրել եյին $13\text{--}60^{\circ}/0\text{-ով}$, իսկ տեղաբերույնիսկ՝ $14\text{--}71^{\circ}/0\text{-ով}$:

Դ) Շարքացան մեքենաներով արած ցանքը, փոխանակ սովորական շաղացան անելու, նույնպես ավելացնում և բերքատվությունն այն պարզ պատճառով, վոր շարքացանով ցանած սերմերն ընկնում են հողի վորոշ խորության մեջ, հավասարապես ծածկը վորում են հողով, միահավասար սնունդ և ջուր են ստանում և միասին ել դուրս են գալիս հողի միջից: Շարքացանով ցանելիս՝ նախ $15\text{--}20$ տոկոսով քիչ սերմ և գնում և յերկրորդ՝ բերքը $10\text{--}15^{\circ}/0\text{-ով}$, իսկ յերրեմն ել ավելի մեծ տոկոսով ավելանում ե:

Ե) Կանոնավոր ցանիսաշրջանառությունը յեվ սերմնափոխությունը բերքը բարձրացնելու մյուս կարեոր աշխատանքն է: Փորձված ե, վոր, յեթե աշնանացանի համար հողը յերկու-յերեք մատ խորությամբ վարել են ամուր և ապա աշնան սկզբին նույն արտը նորից վարել են խորն ու հետո ցանել, դրանից բերքն ավելացել է $15\text{--}20^{\circ}/0\text{-ով}$: Իսկ յեթե

գարնանացանի համար հողը վարել են աշնանը և թողել ձյան ու սառնամանիքի տակ և գարնանը շուտ փոցիսել ու ցանել են, այն դեպքում բերքն ավելացել է $30\text{--}40^{\circ}/0\text{-ով}$: Լավ բերք է ստացվում, յերբ ցորեն են ցանում կարտոֆիլից, առվույտից, չալթուկից հետո կամ գազարից ու ճակնդեղից հետո. մի խոսքով, յերբ վոչ թե ցորենից հետո ցորեն կամ այլ հացահատիկ յեն ցանել, այլ հացահատիկից հետո ցանել են արմատաբույս (բազուկ), պալարաբույս (կարտոֆիլ) և հետո նույն հողի վրա ցանել են հացահատիկ:

Բույսերի այդ կանոնավոր փոփոխությունն ըստ վորոշ տարիների, միենույն արտերի մեջ կոչվում և ցանիսաշրջանառություն, վորը կանոնավոր և արդյունավետ յիրկագործության հիմքն է կազմում և միշտ ել գործադրողին տալիս ել լավ և հաստատուն բերք:

1. ԱՆՑԱՆ ԲԵՐԳԱՐԾՎԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այժմ մի հարց. անցած բերքարշավին մեր գյուղացիներն ի՞նչ չափով եյին գործադրել բերքն ավելացնելու վերը հիշված միջոցները, բոլորն եյին արել այդ:

—Ի հարկե՝ վոչ բոլորը: Տեղ-տեղ գյուղովի միայն սերմն եյին զտում, տեղ-տեղ գութաններով եյին վար անում և դրա կողքին չութերով եյին վարում, տեղ-տեղ անհատ տնտեսությունները պարարտացնում եյին հողերը,

կային ամբողջ վրձաններ, ուր շարքացան եյին անում, կային և այնպիսի տնտեսություններ, վորոնք հիշված յեղանակներից մի քանիսն եյին գործադրում և այլն։ Դրա հետեւանքով այս գարնան մեր բերքը համեմատաբար ավելի լավ էր, քան անցյալ տարիներում։ Այդ կողմից աչքի եյին ընկնում մեր բամբակացան մի քանի վրձաններ, ուր բամբակագործական ընկերությունները պարտադիր կեպով գոծադրել եյին և' աշնան հերկ, և' պարարտացում, և' լավ սերմեր, և' շարքացան և կատարել եյին միջնակների մշակություն ու բամբակենու հիվանդությունների բուժումը։ Յեզ վորպես հետեւանք դրա ստացվեց այն, վոր, չնայած գարնան ուշ ցանքին և վատ ու աննպաստ յեղանակներին, այս տարի այն բամբակագործները, վորոնք գործադրել եյին հիշյալ ձեռնարկումները, նրանց բամբակի բերքը՝ նակին տարիների համեմատությամբ՝ լավ բերք տալու բոլոր նշաններն ունի:

Հետաքրքիրն այն և, վոր պարզ ագրուճեռարկումների այս շարքն ամենից ավելի և ամենից լրիվ կերպով գործադրել են այս տարի մեր կոլեկտիվ տնտեսությունները և դրա հետեւանքով նրանց բերքը, համեմատած անհատ տնտեսությունների միջին բերքի հետ, ավելի մեծ և յեղել գրեթե ամեն տեղ։

— Ինչո՞ւ։

Այն պարզ պատճառով, վոր կոլտնտեսություններն իրենց միացած եղամասերով կա-

րող եյին տրակտորներով վար անել, փոխանակ արորներով վարելու, նրանք եյին, վոր երենց անդամների միացած անասուններով կարողանում եյին 4, 5, 6 զույգ յեզներ դուրս բերել գութանալարի համար։ Նրանք եյին, վոր ձեռք եյին բերել տրիեյներ և իրենց ունեցած ամբողջ սերմացուն մաքրել եյին տալիս։ Այդիների ու բամբակների բուժումն ամենից լավ կատարեցին կոլտնտեսությունները, բամբակի շարքացանն ու կուլտիվացիան (միջնակների մշակությունը) կոլտնտեսություններն եյին անում։ Կային կոլտնտեսություններ, վորոնք իրենց բերքի կալումը կատարել են բարդ կալսիչ մեքենաներով, որեկան կալսելով 1000—1500 խուրճ, փոխանակ կամերի, վորոնցով յերեք որում 150—200 խուրճ հազիվ ե կալսվում։ Կար կոլտնտեսություն, վորոնց անդամների միացյալ և յեռանդուն աշխատանքով մի որում մի հեկտար այդի յեր վորվում («Անաստված» կոլտնտեսության մեջ) և մի որում 800—1000 նոր ծառեր տընկվում։ Ճանապարհների և առուների նորոգումը, նոր կամուրջներ գցելը, խոտացանությունը, ծառատնկումը և այլն ամենից շատ և ամենից լավ կատարվել ե մեր կոլտնտեսություններում։ Նրանց անդամների կոլեկտիվ աշխատանքի շնորհիվ։

Հիշած բոլոր ձեռնարկումները մի գլխաւոր նպատակ ունեյին՝ բարձրացնել բերքը։ Բնական և, վոր հարց տրվի, արդյո՞ք այդ

ձեռնարկումների կիրառման հետևանքով կոլտնտեսությունների բերքն ավելի մեծ ե յեղելքան մյուս անհատ անտեսությունների բերքը։
Պատասխանենք այդ հարցին։

Ճիշտ ե, մենք գեռես չունենք մեր ձեռքի առակ կոլտնտեսությունների ստացած բերքի արդյունքների ճիշտ հաշվառումը, բայց մի շարք տեղեկություններ կան, վորոնք ցույց են տալիս, վոր բոլոր այն կոլտնտեսությունները, վորոնք գործադրել են բերքի բարձրացման նույնիսկ մի քանի միջոցներ, նրանց ստացած բերքն անհամեմատ ավելի բարձր ե յեղել անհատ անտեսությունների միջին բերքից։ մաքրած սերմացուն, լավ և իր ժամանակին կատարած հունձն ու կալսումը տվել են զդալի ողուաներ այնքան, վոր այսոր կոլտնտեսությունների մեծ մասը, հանած իր սերմացուն և իր անդամներին ուտելու համար բազ թողոծ հացը, այնքան ավելցուկ և ստացել, վոր ուժեղ կերպով մասնակցել ե հացամթերման մեր կամպանիային և հարյուրավոր տոնն ցորեն, դարի, կարտոֆիլ, խոտ, խաղող, միրզ, բանջարեղեն և տվել գյուղատնտեսական կոռպերացիային։

Յեվ ահա բերքի այս տոնին և, վոր պետք և իրենց աջողություններով ու նվաճումներով հրապարակ գան մեր կոլտնտեսությունները՝ ցույց տալու—թե ի՞նչ են արել տարվա մեջ, թե վո՞րքան են նրանք առաջ ան-

ցել անհատ անտեսություններից, մանավանդ ունեոր և կուլակ անտեսություններից։

Ահա այս պատկերն են տալու մեզ և ամբողջ գյուղացիությանը «Բերքի և կոլտեկտիվացման տոնին» կազմակերպված մեր կոլտընտեսությունները։

Դրանք են, վոր ամենայեռուն մասնակցություն պետք ե ունենան մեր բոլոր շրջաններում «Բերքի տոն»-ին կազմակերպվող ցուցահանդեսներում ու մրցությունների ընթացքում։ Հիմա յե, վոր մեր կոլլեկտիվ անտեսությունները պետք ե հրապարակ բերեն իրենց կոլլեկտիվ աշխատանքների արդյունքները, լինեն դրանք հացահատիկներ, բամբակ, խաղող, բանջարներ, թե լավ կաթնատու կովեր, լավորակ հորթեր, ձիեր, յեղներ, թըռչուն, մեղր, կոնսերվներ, թարմ և չորացած միրզ, բազուկ, գաղար, կաղամբ, կարտոֆիլ և ուրիշ մթերքներ։

Սակայն բավական չեն դրանք. ցուցահանդեմներում մեծ տեղ պետք ե բանի այն հարցի պարզաբանությունը, թե ի՞նչ միջոցներով, ի՞նչ յեղանակով են նրանք ստացել այդ մըրքերին ու բերքը, ի՞նչքան աշխատանք ու ի՞նչ միջոցներով են ձեռք բերված, քանի՞որ են գործ դրել դրանց ստանալու աշխատանքների վրա, ի՞նչպես են մշակել հողը, ի՞նչպես են խնամել բույսը, ի՞նչքան խնայողություն ե յեղել աշխատանքի որերի մեջ, ի՞նչպես ե կազմակերպված յեղել այդ աշխատանքը, ի՞նչքան

բերեք են ստացել, ի՞նչպես են կազմակերպել արդյունքի սպառումը, վո՞րքան վարկ են ստացել, ի՞նչպես են կազմակերպել արդյունքի սպառումը, վո՞րքան վարկ են ստացել և վո՞րքան նպատակահարմար են գործադրել ստացած վարկերը։ Պակաս դեր չպետք է խաղան գործիքների ու մեքենաների լավ ու խնամքով գործադրության խնդիրները, տրակտորների աշխատանքը, նրանց նպատակահարմար ու եժան աշխատեցնելը, մյուս գործիքների—տրի-յերների, սրակիչների, շարքացաների աշխատած որերը, նրանց ներկա դրությունը, նրանց տված եֆեկտը, քանի՞ հեկտար ե վարել, ցանել, քաղհանել և ինչ ե նստել այդ աշխատանքը կոլլեկտիվին։

Ահա հարցեր, վորոնք դիագրամների, կորտոգրամների, թվերի ու բացատրականների միջոցով պետք ե դառնան շրջանային ցուցանդեսների ժամանակ դասախոսությունների, զրույցների և քննադատության հարուստ յութ։ Ահա վորտեղ և ինչումն ե կայսերու իսկական մրցությունը կոլտնտեսությունների և անհատ տնտեսությունների միջև։

8. ՊԱԿԱՍԱՎՈՐ ՅԵԼ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ ՅԵՎ ԹԵԳՈՒՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԳՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Մենք այստեղ նշեցինք կոլլեկտիվ տնտեսությունների ձեռք բերած հաջողություններն

ու նրանց ունեցած նվաճումները գյուղատնտեսության մեջ։ Զպետք ե մեր աչքերը խփենք ու կույր ձևանանք չտեսնելու համար այն պակասներն ու թույլ կողմերը, վորոնք յեղել են մեր աշխատանքի ընթացքում։

Լայն ու անկեղծ ինքնաքննադատությունը պետք ե լինի այն ջահը, վորը լուսավորելու յեմեր աշխատանքի ճանապարհ՝ տնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում։

Վոր մը կոլտնտեսությունները բոլորն ել առանց բացառության ունեցել են այդ բացերը — դա չպետք ե ծածկենք և միմիայն մեր ունեցած հաջողությունները ցույց տանք։ Ընդհակառակը։ Իմանալու յենք, վոր հասարակական այն կազմակերպությունն ե առողջ ու կենսունակ, վորի մեջ տարբում ե առողջ ինքնաքննադատություն իր պակասավոր կողմերի, իր անհաջողությունների։ Հրապարակ բերել այդ պակասավոր կողմերը, քննել դրանց իսկական պատճառները, գտնել այն միջոցները, վորոնցով հնարավոր ե և պետք ե կոլլեկտիվը շակի այդ պակասները — ահա մի ուրիշ մեծ գործ, վոր պետք ե կազմակերպել միշտ և հատկապես «Բերքի ու կոլլեկտիվացման առնի» ընթացքում։ Իսկ այդպիսի պակասները յեղել են ավելի քան շատ։ Արդեն մեր մամուլի-լրագրությունների մեջ կան ստույգ տեղեկություններ, թե ինչպես կոլտնտեսությունների մեջ մուտք են գործել անհարազատ տարրերը՝ կուլակներ, նեպմաններ, սպեկուլաններ, հարբեցողներ

վատնիչներ, տերտերներ, նախկին և ներկա
վաշխառուներ, վորոնք մտել են կոլտնտեսու-
թյա մեջ, նպատակ ունենալով պայմաննել այն
ներսից, հուսալքում, իստոնակչություն, դա-
վեր ու անհամաձայնություն սերմանելով նը-
րանց անդամների մեջ:

Դրաք կոլլեկտիվ տնտեսությունների վը-
նասառուներն են, վորոնց շատ տեղերում հա-
ջողվել ե ամենախորհամանի կերպով տանել ի-
րենց քայլքայիչ գործը և վնասել կոլտնտեսու-
թյուններին:

Նրանց շատ անգամ հաջողվել ե վոչ միայն
անդամագրվել կոլլեկտիվին, այլ նույնիսկ
խցկվել նրա խորհրդի մեջ, դառնալ խորհրդի
նախագահ, գործերի ղեկավար՝ դիտավորյալ
կերպով կործանելով կոլտնտեսությունը:

Յեղել են դեպքեր, յերբ նրանք դիտավոր-
յալ կերպով այնքան վաղ են տարել կոլլեկ-
տիվների գործերը, վոր կոլտնտեսությունն
սկսել ե ներսից փուլ դաշտ, նեխվել և չի անցել
մի քանի ամիս նրա կազմակերպման որից, վոր
մեկ ել սկսում են մեկիկ-մեկիկ գուլս դաշտ նրա
անդամները և շուտով կոլլեկտիվը լուծվում
է, խաղք ու խայտառակ լինելով մյուս գյու-
ղացիների աչքում:

Քիչ չեն դեպքեր, յերբ վնասաբար դեր են
են կատարել կոլտնտեսությունների մեջ կոմ-
յերիտականները, կոմկուսակցության անդամ-
ները, վորոնք, առնելով իրենց ձեռք կոլլեկ-
տիվի ղեկը, ամեն կերպ խույս են տվել, փա-

խել են նրա «սև աշխատանքից» և աշխատանքի
մեջ լծել են բատրակ, չքավոր անդամներին ու
սրանց ոգտագործել են ամենախայտառակ
կերպով:

Քա՞նի-քա՞նի իրենց «կոմունիստ» համա-
րած անձեր, կուսակցության տոմսը ծոցե-
րում խույս են տվել կոլտնտեսություն մտնե-
լուց և տարածել են կոլտնտեսության մասին
ամենաաննպաստ լուրեր, արդարացնելու հա-
մար իրենց կոլլեկտիվի մեջ չմտնելու խայտա-
ռակ փաստը:

Յեղել են շատ դեպքեր, յերբ վերստուգիչ
հանձնաժողովները միայն ընտրվել են և այ-
նուհետեւ խորհրդի վոչ մի գործն ու աշխա-
տանքը չեն ստուգել, վորի հետեանքով կոլ-
տնտեսություններում յեղել են խոշոր վատ-
նումներ, աշխատանքի վատ գործադրություն
դեպի հիշյալի գույքը, անխնամ վերաբերմունք,
վորոնք և առիթ են դարձել կոլլեկտիվի քայ-
քայման ու նրա կրած մեծ վնասների:

Յեղել են դեպքեր, յերբ յերկու հարեան
կոլտնտեսություններն սկսել են իրար հետ
մրցել, միմյանցից ջուր, հող, մեքենաներ խլել,
վորի հետեանքով նրանց մեջ առաջացել են կը-
ռուիվ, վեճեր, իրարանցում և նույնիսկ միմյանց
ծեծել ու վիրավորանքներ, փոխանակ միանա-
լու և մի ավելի մեծ կոլլեկտիվ կազմակեր-
պելու:

Նպաստավոր չե մի շաբք կոլլեկտիվների
ներքին կյանքում բուն դրած վատ կենցաղը,

կանանց վերաբերմամբ ունեցած պարսավելի դեպքերը, կանանց ծեծելն ու արհամարելը, նրանց հայհոյելն ու կշտամբանքը: Ահա մի մասն այն անհանդուրժելի յերեսույթներից, վորոնք, վորպես հին կենցաղի և իրավակարգի ժառանգություն, մտել են նաև մեր կոլտնտեսությունների մեջ և ուտում են նրա կյանքը, ներսից, կոլեկտիվի խաղաղ, շինարար աշխատանքը գարձնելով դժողք:

Մի՞թե այդ չե պատճառը, վոր շատ կոլեկտիվներում կանայք խույս են տալիս մտնել կոլխոզներ, գերադասելով մնալ և տանել իրենց հին, նահապետական կենցաղը:

Վատ են կազմակերպված մեր կոլտնտեսություններում մսուրի, մանկան հրապարակների շատ կարևոր գործը, վորի շնորհիվ մանր յերեխաներ ունեցող կին անդամները՝ մայրերը, հնարավորություն չեն ունենում աշխատել դաշտում և, տառջվա պես, կպած են տան միջի անտեսական և յերեխաներին կերակրելու ու խնամելու գործին:

Կան և ուրիշ շատ յերեսույթներ՝ դա կոլեկտիվի անդամներից վորանց ծույլ, անուշադիր և անտնտեսավար վերաբերմունքն ե դեպի հասարակական աշխատանքն ու վույքը, վորից պակաս չե վնասովում կոլտնտեսությունը:

Ահա ինդիբներ, վորոնք «Բերքի և կոլեկտիվացման տոնին» պետք ե քննության տոնը վեն շրջանում տեղի ունեցած խորհրդակցությունների կողմից և ամենակարական միջոց-

ներ ձեռք առնվեն դրանց վերացնելու, շտկելու և կոլեկտիվի թե՛ արտաքին և թե՛ ներքին կյանքը գնելու առողջ հունի մեջ, ինքնաքննադատության բովից անցկացնելով կոլեկտիվներում բոլոր այդորինակ բացասական յերեվույթիցները:

9. ՍՈՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՅՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գյուղատնտեսության բնագավառում սոցիալիստական մրցության առաջին շարքերում պետք ե կանգնած լինեն մեր կոլեկտիվ տնտեսությունները, վորպես հասարակական այնպիսի կազմակերպություններ, վորոնք կոչված են խորացնելու իրենց աշխատանքները գյուղի սոցիալիստական ջնարարության ասպարիզում: Ահա այստեղ և, յերբ հարեւան նույնանման տնտեսություն ունեցող կոլտնտեսությունները կարող են հայտնաբերել առողջ ու շինարար մրցություն, ագրոնոմիական պարզ և նույնիսկ բարձր ձեռնարկումներ իրենց մեջ կիրառելու գործում: Ամենից լավ և չուտ վարը, լավորակ սերմացույի գործածումը, շարքացանը, պարարտացումը, աշխատանքների նպատակահարմար գործադրությունը, մեծքերքը և նրա ավելցուկները պետության հացամթերման գործին հատկացնելու—ահա մրցակցության այն առարկաները, վորոնք կարող են և պետք ե դառնան մեր կոլեկտիվ

տնտեսությունների իրարու հետ մրցության
առարկանները:

Պակաս նշանակություն չունի սոցիալիս-
տական մրցության բնագավառում կանոնավոր
հաշվապահությունը, վորը մեր կողարքն-
տեսությունների կյանքի ամենից յա-
վոտ կողմն է, նաև տարեկան արտա-
դրական պլանների 100 տոկոսով և ա-
վելի իրացումը, գյուղատնտեսական մեքե-
նաների և գործիքների լավագույն կերպով ոգ-
տագործելը և նրանց լավ վիճակում պահելը,
առուների, ճանապարհների, կամուրջների նո-
րոգությունը, մանր ճահճների, կանգնած
ջրերի վոչնչացումը, ծառատնկումն ու կար-
կուտի, հեղեղների ու վնասատուների դեմ
տաշած ու տարվելիք պայքարները և այլն և
այլն: Ահա՝ մի շարք խնդիրներ, վորոնց շուրջը
պետք եւ կարելի յե կոլլեկտիվ տնտեսու-
թյունների միջև բանալ սոցիալիստական մըր-
ցության, հրապարակ բերելով—«ո՞վ շատ,
ո՞վ չուտ, և ո՞վ ամենից լավ» լոգունդը:

Այսորինակ մրցության մեջ կարող են մըտ-
նել վոչ միայն շրջանի հարևան կոլլեկտիվ
տնտեսություններն իրարու հետ, այլ մի շրջ-
անի կոլլեկտիվ տնտեսությունները կարող
են սոցիալիստական մրցության հրավիրել այլ
շրջանի և գավառակի կոլլեկտիվ տնտեսու-
թյուններին, հենց նույն այն խնդիրների լա-
վագույն կատարման գործում, վոր մենք շեշ-
տեցինք վերեւում: Յեվ այսպես, սոցիալիստա-

կան մրցությունը լայն հրապարակ եւ բացում
մեր կոլլեկտիվ տնտեսությունների համար
գյուղատնտեսության և աշխատանքի բոլոր
բնագավառներում հրապարակ բերելու իրենց
կամքը, վճռականությունը, աշխատունակու-
թյունը, տեխնիքական կատարելագործումնե-
րը, սպառման և մթերման աշխատանքները,
նոր կենցաղի, շինարարության, կուլտ-կրթա-
կան, առողջապահական հարցերը, վորոնք ա-
ռանձին-առանձին և իմի առած կազմում են և
կազմելու յեն մեր կողանտեսությունների մը-
տահոգության, հոգսերի և աշխատանքի եյու-
թյունը, վորոնք և պետք եւ գառնան սոցիալիս-
տական մրցության առարկա թե՛ այս տարի և
թե՛ առաջիկա տարիների համար:

10.ՄԵՐ ՀՆԳԱՄՅԱ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՊԼԱՆԸ

Մեր մյուս և ամենակարեւոր նվաճումնե-
րից մեկն ե՝ հնգամյա հեռանկարային այն պը-
լանը, վորը կազմված և 1928-32 թվերի հա-
մար:

— Ի՞նչով և նա նվաճում—կը հարցնեն
մեզ:

— Նրանով, վոր մենք այդ պլանով աշ-
խատել ենք ձիշտ կերպով նշել մեր շինարա-
րության ու առաջ գնալու այն ճանապարհը,
վորը նպատակ ունի տարեց-տարի մոտեցնել
մեզ սոցիալիզմին, վոչ թե անծրագիր, չ'չափ-
կած ու չ'հաշված, այլ նկատի ունենալով մեր

ձեռքի տակ ունեցած և մեր կողմից ձեռք բեր-
վելիք բոլոր հնարավորությունները:

Այդ պլանի իրագործման ժամանակ գյու-
ղատնտեսությունը կատարում է և կատարե-
լու յե առաջնակարգ դեր: Լայնացնել մեր զա-
նազան տեսակի ցանքսերի տարածությունը,
բարձրացնել մեր հողերի ցածր բերքատվու-
թյունը, ազնվացնել ու բազմացնել ցեղական
ամեն տեսակի անասունները՝ ստանալու դրան-
ցից շատ և լավ մթերքներ, մատակարարել մեր
գյուղատնտեսությանը լավորակ սերմացաւ,
պարարտանյութեր, տրակտորներ, մեքենա-
ներ ու գործիքներ, կառուցել նոր և հարմար
շինություններ, տալ մեր գործարաններին
հում նյութեր՝ բամբակ, բուրդ, շերամ, շա-
քարի ճակնդեղ, կարտոֆիլ, վուշ, կանեփ,
ներկատու բույսեր և այլն, այնքան, վորպեսզի
նրանք ամբողջ թափով աշխատեն ու ապահո-
վեն խորհրդային յերկրների գյուղացիության
ու բանվորների սպառման պահանջները, իսկ
ավելցուկն արտահանվեն ուրիշ յերկիքներ,
մեր այլ կարիքները հոգալու: Ահա հնդամյա
պլանի առջև դրված խնդիրները, վորոնք մեր
բոլորի խնդիրներն են:

Ահա այստեղ ե, վոր, թե մեր անհատ արհ-
տեսությունները և մանավանդ կոլեկտիվ
տնտեսություններն ու անկուսակցական գյու-
ղացիությունը պետք է լարեն իրենց բոլոր ու-
ժերն ու յեռանդն՝ իրականացնելու այդ ծրա-
գիրը, և դրանով հետզհետե ազատելու խորհ-

զային յերկըների բանվորներին ու գյուղացի-
ներին արտասահմանի բուրժուական պետու-
թյուններից ունեցած նրանց կախումը:

Հեգամյա պլանի իրագործումը մեր ազա-
տագրումն ե մեր քշնամիներից, վորոնք ծաղ-
րով ու հեղնանքով են նայում սոցիալիստական
յերկիքը վերակառուցելու մեր լարած ջանքե-
րին:

Կոլեկտիվ տնտեսությունների, վորպես
սոցիալիստական գծով գնացող մեր գյուղա-
տնտեսության ամենաառաջավոր ջոկատների,
վրա յե ընկնում իրենց հերթին՝ իրենց հնգամ-
յա ծրագիրները կազմել այնպես, վորպեսզի
նրանք վոչ միայն կատարած լինեն իրենց վրա
ընկած պարտականությունները հինգ տարում,
այլ ավելի կարճ ժամանակում:

Վոր մեր կոլտնտեսությունները կա-
րող կլինեն այդ անել, այդ յերեսում ե
այն մեծ թափից, վորով, ինչպես տե-
սանք վերեսում, մեր չքավոր ու միջակ
գյուղացիությունը ահագին թվով մանում
ե կոլտնտեսությունների մեջ, ուժեղացնում ու
ընդարձակում ե նրա արտադրանքը և այդպի-
սով գնում ե ավելի առաջ, քան այդ ծրագր-
ված ե մեր և իրենց հնգամյա պլանում:

«Բերքի և ինդուստրացման տոնին», հընդ-
ամյա մեր պլանը և նրան հասնելու իրական մի-
ջոցներն ու յեղանակները պետք ե մանրամասն
քննության առնվեն այդ տոների որերին կազմ-
ված արտադրական խորհրդակցությունների

մեջ, ներս զրավելով դրանցում վորչափ կարելի յե մեծ թվով թե՛ անհատ տնտեսություններին և թե՛ մանավանդ կոլտնտեսությունների անդամներին:

Մեր ագրոնոմներն ու ամեն տեսակի մասնագետներն ու հրահանգիչները պետք ե այս տոնին լայն բացատրականներ տանեն Հընդամյա պլանի վերաբերյալ հարցերի շուրջն այն հաշվով, վորպեսզի այդ պլանների մեջ առնվեն վոչ միայն առանձին-առանձին կոլտնտեսությունները, այլ և առանձին-առանձին գյուղերն և նույնիսկ շրջանները, վորոնցից ամեն մեկը պետք ե ունենա գյուղատնտեսության իր հեռանկարային հնդամյա պլանը:

11. ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼԸ

Մի այլ կարևոր գործ, վորն ընկնում և մեր գյուղի և կոլլեկտիվ տնտեսությունների վրա, դա այն ժամանակցությունն է, վոր նրանք պետք ե հայտնաբերեն պետական և այն բոլոր փոխառությունների իրացման գործում, վորոնց նպատակն է գյուղատնտեսության բարձիրացումը և ինդուստրացման զարգացումը—փոխառություններ, վորոնք տանելու յեն մեր յերկիրն ու հանրապետությունը գեպի սոցիալիզմ:

Այդորինակ փոխառություններից ստացված գումարներով ե, վոր ամրանում ե մեր

սոցիալիստական շինարարությունը, նախ և առաջ մեր կոլլեկտիվ տնտեսությունները: Նոր շենքերի, նոր գյուղի, գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների և անասունների համար նրանց բաց թողնվելիք վարկերը, տարեկան միլիոնների յեն հասնում, զրանք անհնարին առանց մեր բոլորի և հատկապես կոլտընտեսությունների ամենաշերմ աջակցության: Այս, թե ինչո՞ւ ամեն մի կոլտնտեսություն իր տառջին պարտքն է համարելու դնել այդ փոխառությունները, մասնակցելով նրա տոմսերի իրացմանը, նամանավանդ, վոր այդ նպատակով տված գումարները լավագույնի խնայություններն են, վոր կարող են ամել կոլտնտեսությունները, չքավոր ու միջակ գյուղացիները հենց իրենց անմիջական շահերի տեսքետից:

«Բերքի և ինդուստրացման տոները» բավարար առիթ են ներկայացնում, յերս կոլտնտեսությունների խորհուրդները, խմբակույին ազգությունները պետք ե ամենալավ բացատրական կամպանիա մղեն այդ խնդիրների շարքը և համոզեն իրենց անդամներին և վոչ անդամներին ամենագիտակից վերաբերմանք ունենալ գեպի այլորինակ փոխառությունները ու գրանցումը: Զե՞ վոր «Բերքի տոն»-ին ցուցագրած գրեթե բոլոր մթերքներն ու գործիքները գլուխ են յեկել շնորհիվ այն վարկերի, վոր բաց և թողել պետությունը, ողափելով նախ և առաջ այդ փոխառությունը, ողափելով նախ և առաջ այդ փոխառությունը:

թյաններից սոտցված գումարներից ու տպաներնց՝ զյուղացիոն թյան արտարերած աշխատանքներից:

Այս հանգամանքը պետք է աչքի առաջ ունենալ, «ԲԵՐՔԻ և կոլլեկտիվացման տանիք» խորհրդակցությունների և հավաքութիւնների ժամանակ հրապարակ դարսի՝ զյուղացիական մասսաների առջև ամենալայն բացառականներով:

12. ԲԵՐՔԻ ՅԵԼ ԻՆԴՈՒՍՏՐԱՑԱՆ ՏԱՆԵ ՆԱՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՏՈՂՆ Ե

Յեկ այսպիս, «ԲԵՐՔԻ և կոլլեկտիվացման տանիք» դասում և մեր զյուղացիոն թյան և նըրանց հետ կոլլեկտիվ տնտեսությունների հասարակական և զործնական հաշվետվության որ, վորի ընթացքում մի կողմից պետք է հրապարակ բերվի մեր զյուղատնտեսության սոցիալիստական գծով տարված աշխատանքի բոլոր հաջողություններն ու նվաճումները, իսկ մյուս կողմից պետք է ինքնաքննադատության միջոցով բացել այն բոլոր սրականներն ու թեքումները, վորոնք նկատիել ու նկատվում են մեր կոլլեկտիվներում և կոսպերատիվ այլ միությունների մեջ: Կազմակերպել լայն խորհրդակցություններ և բացառականներ՝ զյուղատնտեսության բարձրացման, հացամթերման և սոցիալիստական մրցման շոշափելի հարցեր, ինդուստրիացման զարգացման

համար բաց թողնված փոխառությունների առթիվ, ահա որպարզի հարցերը: Դրանց հետ զուգահեռ քննվելու յեն մեր հնդամյան կառանկարային պլանը, վերաբերյալ կորունդասությունների տարեց-տարի զարգացմանը, նրանց կողմից չքավոր, բատրակ և միջակ գյուղացիական զանգվածներ ներգրավիլուն, բերքի ու գյուղատնտեսության հումուլթի ու որա ապրանքայնացման ինդիբները և այլն դասնալու յեն այս տնների բավանդակությունը: Յուցանդեսներում ու մրցություններում պետք է մասնակցեն ինչպես անկուսակցական գյուղացիական տնտեսությունները, նույնպես և առաջին հերթին կոլեկտիվ անունությունները:

Այսպիսով և ահա, վոր Խորհրդային իշխանությունը կապում է բերքի տոնը գյուղատնտեսության կոլլեկտիվացման աշխատանքների հետ—համարելով այդ յերկուսը մեր յերկրի զարգացման և կուլտուրական առաջադիմության կարելոր հիմնաքարը, վորի վրա շինվելու յի և շինվում և սոցիալիզմի հոյակապ ու հսկայական և դեռևս վոչ մի յերկում և վոչ մի տեղ չկառուցված մի շենք:

Ց Ե Կ

1.	Ի՞նչպես եր կատարվում բերքի տոնն առաջներում	3
2.	Ինչո՞ւ սահմանվեց բերքի առնը	6
3.	Ինչո՞ւ յէ այս տօնը կոչվում նաև կոլեկտիվացման տօն	9
4.	Գյուղատնտեսության կոլեկտիվացման նպատակները	13
5.	Հողերի միացումը և նրանց միասին մշտելը	16
6.	Բերքատվությունը բարձրացնող պարզ միջոցները	19
7.	Անցած «բերքարշավի» արդյունքները	25
8.	Պակասայիր և թույլ կողմերի ու թեքումների ինքնարհնաղատառութ	30
9.	Սոցիալիստական մրցության խընդիրները	35
10.	Հնդամյա մեր հետանկարային պլանը	37
11.	Պետական փոխառություններին մասնակցելը	40
12.	Բերքի և ինգուստարացման տօնը նաև հաշվեավության տօնը	42



18. Հ. Ազատյան—Գյուղատնտեսական բանվորութ . միջազգ . կոմմունիստական շարժումը (սպառված) 40
19. Ն. Խան-Աղյան—Ռողեցույց արդյունավետ խոզարության (սպառված) 15
20. Ֆերդինանդով—Հավարուծ . և նրա ուսումն . (սպ.) 20
21. Ա. Դանիելքով—Լավ և ուշ, քան յերեք (ազբուիլյուս) (սպառված) 20
22. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան—Կառավարության կանոնը (սպառված) 20
23. [REDACTED]
24. Հրահնիկ Հայտուանի և Ս. Համբավեսության մասնանիքից փայտեղին քաց քողմելու համար (պաշտոնակ) 15
25. Պրոֆ. Ավ. Քալանիքար—Կաթոնառու կովի կերակր . (սպառված) 30
26. Ա. Ա. Տրիփոնով—Ինչու պետք ե ցելը չուտ անել 15
27. Ա. Բակրուցից—Գալուստի վեկը (աշխո-պատմվածք) 15
28. Ա. Բակրուցից—Կարտոֆիլի մշակությունը (սպառ.) 20
29. Լ. Սուրբուին—Կովի գամաք (ազբու-պիլիս) 20
30. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան—Տիգրանեկ (սպառ.) 5
31. Իս. Տեր-Ներսիսյան—Պատառու ծառերի վնասա-տունին ու հիմնադրությունները (սպառված) 25
32. Արճակ Տրակոսոր (աշխո-պատմվածք) 15
33. Յալուացի—Մարտրդավոր տրտուններ ազբու-զրույց 15
35. Խոկո-պեր—Գյուղատնտեսանորությունը և իր ար-բու-զրույցը 20
37. Մ. Խանզարյան—Մեղմաբուժյան դուծնական ձեռնարկ (սպառված) 60
38. Արամայիս Յերգիլյան—Մեր դի հերթական խնդիրներից (սպառված)
- ՀՀ Ազգային գրադարան
39. Ա. Աբանայյան—Գութան, թէ՞ .
40. Վ. Բայրով—Այծն աղքատի կով .
41. Իս. Տեր-Ներսիսյան—Պատառը .
42. Ի. Կուզնեցով—Հենինը և գյուղացրությունը .
43. Ա. Մուշեղյան—Անտառը պետք ե հաշվով կտրել . 5



NL0203641

31.905

44.	Խս. Տեր Ներսիսյան—Բնչողես սլատովազատու ծառերը	
45.	Ա. Բակունից—Խոսորքուրի կոմունան	30
46.	Հ. Ազատյան—Յեռաղջաշտից դեպի սոցիալիզմ՝ կոոպերացիայի վրայով	1 ո.
47.	Վ. Միխայլով—Տակարի վարակիչ հիմանդրությունները	5
48.	Մ. Թումանյան—Կիկ	25
49.	Պ. Քաջանքաբյան—Գոմազը	5
50.	Նոյեմբերի նախապարհին (ժողվ.) (սպառված)	20
51.	Պրոֆ. Ավ. Քալանքար—Լաթինառատ կովի ընտրությունը և նախիրի աղնվացումը	20
52.	Հրահանգույուղատնությունը, կոսուլ, բնկերությունը մարդագրելու կարգի մասին (Հավլ. «Գյուղ. Կանք»-ի)	
53.	ԽՍՀՄ հոգուագործության և հոգաշինարարության ընդհանուր հիմունիքները	20
54.	Հ. Փիրումյան—Հողժողկոմատի 1927-28 թ. գործունեյալքյունը	
55.	Ա. Աքանասյան—Դեպի բերքի բարձրացում	
56.	Վ. Պ. Գորբոնինի—Զիերի արհեստ, բնդմնավորումը	25
57.	Ա. Վերմիջյան—Պաղատուայդին ու նրա խնամքը	45
58.	Ա. Մարգարյան—Վոչխուարություն	
59.	Ա. Ա. և Ա. Պ.—Բանջարաբուծություն	
60.	Ա. Յերգելյան—ԱՄՖՀՀ անասնապահությունը դյուզատնությունը, ինդուստրացումը	25
61.	ՀԱՄԿ(թ)ԿԿ փորոշումը բարեկազործության մասին	
62.	Ա. Աթանասյան—Բերքի և կոլիկոմիզացման տանը ՊԱՐԱՍՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԿՀԱՆՁՆՎԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ	

1. Խս. Տեր-Ներսիսյան—Բնչողես մշակել խողովի այդիները (Բ. առկաությունը)
2. Ա. Առանցյան—Մեղքապահի Արդյունք
3. Պ. Քալանքաբյան—Բերքի բարձրացման խնդիրներ
4. Ար. Խահակյան—Հանրամատչելիք զրույցներ գինեգործության մասին՝ ԳԻՄԵԼ՝ ՅԵՐԵՎԱՆ, Հողժողկոմատ՝ Հրատարակչության,
«Հայզրեֆի» կենտրոնական և գավառական գրախանութերին, Գավհողբաժիններին: